ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019 թվականի նոյեմբերի 19-ից 21-ը:

4. **Հրավիրող կողմը.**
Եվրահանձնաժողովի օդային անվտանգության կոմիտե:

5. **Գործուղման նպատակը.**
մասնակցություն Եվրահանձնաժողովի օդային անվտանգության կոմիտեի՝ Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում 2019 նոյեմբերի 20-ին կազմակերպված նիստին:

6. **Քննարկված թեմաները.**
Եվրահանձնաժողովի օդային անվտանգության կոմիտեի նիստի ընթացքում քննարկվել են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի և Հայաստանի Հանրապետությունում գրանցված ավիաընկերությունների գործառույթների համապատասխանությունը Եվրոպայի թռիչքային անվտանգության գործակալության (EASA) կանոնակարգերին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Եվրահանձնաժողովի օդային անվտանգության կոմիտեի նիստի ընթացքում ներկայացրել ենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ոլորտում կիրառվող մոտեցումները, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի խնդիրներն ու դրանց լուծումները, միաժամանակ պատշաճ կերպով տրվել են պատասխաններ բոլոր բարձրացված հարցերին: Այդ նիստին մասնակցում էին Եվրոպական Միության (ԵՄ) անդամ պետությունների ավելի քան 40 ներկայացուցիչներ: Կայացել են հանդիպումներ ԵՄ, Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության և Եվրահանձնաժողովի օդային անվտանգության կոմիտեի ղեկավար անձնակազմի հետ:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Համաձայն Եվրահանձնաժողովի օդային անվտանգության կոմիտեի գործող ընթացակարգերի՝ Եվրահանձնաժողովի օդային անվտանգության կոմիտեի նախագահի զեկույցի վերջնական արդյունքները կտրամադրվեն մոտակա երկու շաբաթվա ընթացքում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները,**

Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության կողմից վերջնական զեկույցը ստանալուց հետո անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել արձանագրված խնդիրները վերացնելու ուղղությամբ:

Ստորագրությունը, ամսաթիվը

04-ը դեկտեմբերի, 2019թ.